Հավելված N 2
2023 թվականի հունվարի 23-ին կնքված
«1032-11002/23-Տ» պայմանագրի

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N4

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Ծրագրի անվանում | Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ |
| Դրամաշնորհի N | 1032-11002/23-Տ |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ ԱՍՀՆ |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Տարեցների առողջության և խնամքի ապահովման ասոցիացիա» ՀԿ |
| Ծրագրի իրականացման ժամանակահատված | 01.01.2023-31.12.2023 |
| Հաշվետու ժամանակահատված | 01.01.2023-31.12.2023 |
| Ներկայացման օր | 09.02.2024 |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Արթուր Թորոսյան, նախագահ |

2. Բովանդակային հաշվետվություն

2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

1. Կենցաղային սպասարկման ծառայության մատուցում
2. Բժշկական օգնության և սպասարման ծառայության մատուցում
3. Սոցիալ-հոգեբանական, խորհրդատվական ծառայության մատուցում
4. Գնահատում և ամփոփում

2.2. Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

Ծրագրի հաշվետու ժամանակահատվածում 25 շահառուի փոխարեն ծառայություններ է ստացել 30 խոցելի, կողմնակի անձի օգնության կարիք ունեցող մեծահասակ, որոնցից 20-ը բնակվում է միայնակ: 29 շահառու ունի ՄՍԾ ուղեգիր: Շահառուներից Ա խմբում ընդգրկված անձանց թիվը 7-ն է, որոնք գամված են անկողնուն:
Խնամքի կարիք ունեցող շահառուների ուղեգրման պրոցեսը սահուն և առանց դժվարությունների իրականացնելու նպատակով ծրագրի սոցիալական աշխատողը սերտորեն համագործակցել է ՄՍԾ և Իջևանի ԱԱՊԿ հետ՝ շահառուներին ուղեկցելով և աջակցելով ուղեգրման բոլոր պրոցեսներում:

Ծրագրով նախատեսված խնամքի ծառայությունները՝ կենցաղային սպասարկում, բուժքույրական սպասարկում, սոցիալ-հոգեբանական, խորհրդատվական ծառայություն, ծրագրի սոցիալական աշխատողի, բուժքրոջ և սոցիալական սպասարկողի կողմից տնայցերի միջոցով մատուցվել են ըստ գնահատված կարիքի, նախապես որոշված ժամանակացույցով և ըստ անհրաժեշտության՝ արձագանքելով շահառուի հրատապ կանչին նաև շաբաթ և կիրակի օրերին: Ծառայությունները մատուցվել են ժամը 09:00-18:00-ն ընկած ժամանակահատվածում, առանձին դեպքերում, ըստ շահառուի հրատապ կարիքի, նաև այդ ժամանակահատվածից դուրս ժամերի:
Իրականացվել է գերիատրիկ համակողմանի գնահատում, ինչը թույլ է տվել հնարավորինս օբյեկտիվորեն և բազմակողմանիորեն գնահատել շահառուի առողջական և ֆունկցիոնալ վիճակը, քանակական տվյալների հիման վրա ճիշտ պատկերացում կազմել խնամքի ծավալի և տևողության վերաբերյալ: Գնահատման այդ գործիքը մշակվել է Ասոցիացիայի կողմից, փորձարկվել է և հաստատվել որպես մասնագիտական գործիք:
Ա խմբի շահառուները ծառայություններն ստացել են շաբաթական 4-5 անգամ և ըստ անհրաժեշտության, իսկ Բ խմբի շահառուները՝ 3-4 անգամ և ըստ անհրաժեշտության՝ հիմնվելով ինչպես պետական չափորոշիչների, այնպես էլ Ասոցիացիայի բազմամասնագիտական թիմի գնահատման արդյունքների վրա:
Սոցիալական սպասարկողը շահառուներին օգնել է առօրյա գործողություններն (լոգանք, կերակուրի պատրաստում, կերակրում՝ ըստ իրավիճակի և անհրաժեշտության, հագուստի փոխում, հիգիենայի պահպանում) իրականացնելիս, ինչպես նաև առևտուր, կոմունալ վճարումներ անելու, տան մաքրությունը պահպանելու, տանն ընկնելը կանխելու նպատակով անվտանգ միջավայր ապահովելու և ըստ ընացիկ անհրաժեշութայն այլ աշխատանքների իրականացման հարցերում:
Ծրագրի բուժքույրը պատասխանատու է եղել շահառուների առողջապահական կարիքների վերհանման, առողջական վիճակի գնահատման և վերահսկման, անրաժեշտության դեպքում բուժզննման ուղեկցելու, ընտանեկան բժշկի տնայցի կանչ գրանցելու, շահառուների առողջ ապրելակերպը խթանելու և ծրագրի նպատակների իրականացման շահից բխող այլ գործողությունների համար:
Սոցիալական աշխատողը պատասխանատու է եղել շահառուների ծրագրում ներգրավման, նրանց կարիքների գնահատման, տնայցերի անհատական գրաֆիկների կազմման, մասնագիտական խորհրդատվության, ուղեկցման և ուղղորդման, շահերի պաշտպանության և ընթացիկ կարիքից բխող այլ աշխատանքների համար:
Շահառուների սոցիալականացումը խթանելու, ընդունված լինելու զգացումը վերականգնելու, նրանց ներգրավվածությունը մշակութային կյանքում խթանելու համար պարբերաբար տոնվել են ծննդյան օրերը, ազգային տոները:
Ծրագրի ամբողջ ընթացքում արդյունավետ համագործակցություն է կայացել տեղի ՄՍԾ, ԱԱՊ կենտրոնի և Ասոցիացիայի միջև՝ շահառուների ուղեգրումը հնարավորինս հարթ, շահառուին հարմար և արագ կազմակերպելու, նրանց շահերի պաշտպանության և խնամքն արդյունավետ իրականացնելու համար: Արդյունավետ համագործակցություն է կայացել նաև Առաջնորդարանի հետ, որի շրջանակներում շուրջօրյա խնամք է իրականացվել շահառուներից մեկի համար՝ ելնելով հրատապ կարիքից:
Ասոցիացիան փորձել է հնարավորինս արդյունավետ կազմակերպել և իրականացնել շահառուների խնամքը նաև իր անձնակազմի աշխատանքային ու խնամքի հմտությունների բարելավման դասընթացների միջոցով: Այդ դասընթացներն արժեքավոր ներդրում են համայնքային ծառայության շարունակականության, որակի բարձրացման և համայնքում մասնագետների առկայություն ապահովելու գործում:
Իրականացված վերջնական հարցումը շահառուների սեփական վիճակի բարելավման մասին ցույց տվեց, որ բոլոր շահառուներն այս կամ այն չափով բարելավված են համարում իրենց վիճակը, խոսում են դրական փոփոխությունների, այլոց հետ սոցիալական կապերը վերականգնելու, ավելի ապահով զգալու, ուշադրության կենտրոնում գտնվելու մասին: Մասնագիտական գնահատումը ցույց տվեց, որ բարելավվել է նրանց հոգեբանական առողջությունը, նվազել են տագնապները, դեպրեսիան, խթանվել է ինքնուրույնությունը, բարելավվել է առողջական վիճակը՝ բժշկի նշանակումները հետևողականորեն կատարելու

հարցում օգնություն ստանալու, ժամանակին բժշկի դիմելու և այլ գործոնների ազդեցությամբ, այդուհանդերձ, շատերը դեռևս խնամքի կարիք ունեն:
Ծրագրի ամբողջ ընթացքում Ասոցիացիան 20-ից ավել խնամքի կարիք ունեցող տարեցների մասին տեղեկություններ է ստացել նրանց հարազատներից, ՄՍԾ-ից, որոնք դիմել են ծառայությունում ընդգրկվելու համար, սակայն ֆինանսական սուղ ռեսուրսները թույլ չեն տվել բավարարել այդ կարիքները: Բոլոր դիմորդները հաշվառվել են սպասողների ցանկում և կկարողանան լիարժեքորեն օգտվել ծառայությունից 2024թվ.-ին:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

Հղումներ առկա չեն:

2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:

Պետական բյուջեով նախատեսված գումարը բավարար չէ սահմանված ծավալով խնամքն իրականացնելու համար: Խնդիրը լուծելու համար Ասոցիացիան ստիպված է եղել հավելյալ ռեսուրսներ ներդնել՝ ապահովելու մատուցված ծառայության որակը: Իջևան խոշորացված համայնքում խնամքի կարիք ունեցող տարեցների քանակը շատ ավելին է, այդ են փաստում Կազմակերպությանը դիմած ընտանիքները, ինչպես նաև ծրագրի աշխատանքային թիմի բացահայտումները: Այդ առումով նախատեսվում է հավելյալ ռեսուրսներ ներգրավել Կամզակերպությանը դիմած բոլոր շահառուներին սպասարկելու համար: Նրանց թիվն անցնում է 90-ը:

2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):

Կիրառելի չէ:

2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:

Ուղեգրման գործընթացում մշտական է եղել ծրագրի սոցիալական աշխատողի ներգրավվածությունը և դերը, ինչը չի բխում Կազմակերպության պարտականություններից և արվել է բացառապես շահառուի լավագույն շահից ելնելով:

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
«Տարեցների առողջության և խնամքի ապահովման ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ ՝
Ա. Թորոսյան

Digitally signed by GHAZAZYAN LIANA 6201810706
Date: 2024.02.10 11:30:26 AMT

-------------------------------------------
(ստորագրություն)